# ՏԻԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

## ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿ. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

*Մեր ազգային մեծ սուգը մեծ մարդուն կորուստին վրայ՝ սփոփել կու գայ վերջապէս ծանօթ բարձր և ազնուական դէմք մը, նոյն եռանդով ու նոյն լուսաւոր ծրագրով։*

*Եւ առանց օրհնութեան չէ որ պիտի անդրադառնանք մենք, թէպէտև ամէն ազնիւ հայ, բարի և բարերար մեծ Նուպարի յիշատակին՝ որուն սիրտը քիչ բաբախած չէ Հայութեան ճակատագրին համար, քիչ արցունք սրբած չէ անոր ձեռքը որ ամենուրեք կը հասնէր։ Անգամ մ'ալ և բիւր անգամ պէտք է կրկնենք. Օրհնեա՜լ ըլլայ իր անունն և անմահ յիշատակը։*

*«Մեռաւ թագաւորը, կեցցէ թագաւորը»։ Հայութիւնն երբեք որբ չի մնար. իր ճակատագրի տխուր օրերուն ալ որոնց մէջ կ'ապրի յամառ ու անընկճելի դիմադրութեամբ։ Նախախնամութիւնը գիտէ ի հարկին յարուցանել այնպիսի դէմքեր որ հասարակաց հայրութեան սրբազան դերն ստանձնեն սիրով ու գուրգուրանքով։ Այդպիսի մէկն էր անմահ Նուպար փաշա. նոյն սրտով է որ այսօր կը ներկայանայ ամբողջ Հայութեան՝ Նորընտիր Նախագահը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Տիար Գալուստ Կիւլպէնկեան։ Իրմէ և այդ հանրօգուտ և սրբանուէր հաստատութենէն պիտի մեկնի ոչ միայն դրամական նպաստը հայութեան նիւթականը փրկելու և ապրեցնելու, այլ նաև իր բարձր և հեղինակաւոր ձայնն հասցնելու հոն ուր հաշտութեան և միաբանութեան հարկը կայ, փոխանակ ջախջախումի, չէզոքացման՝ ձուլելու կամ զուգահեռականօրէն քալցընելու միշտ դէպ ի նոյն բարձր և սրբազան գաղափարականին իրագործումը՝ Հայութեան զարգացումն և մեծութիւնը։*

*Աշխարհի բոլոր անկիւններուն մէջ աւետեաց պատգամի մը պէս հնչեց նոր ընտրութիւնը. համախումբ, միասիրտ խանդավառ ընդունելութեան արձագանգ տուաւ ամբողջ Հայութիւնը, որուն մենք ալ հոգւով միացած կը շնորհաւորենք Նորընտիր Նախագահը իր բարձր և ազնուական պաշտօնին մէջ, մաղթելով իմաստութիւն և կորով իրագործելու առաջադիր բոլոր ազգանուէր դիտումները ու ծրագիրները որոնց անկեղծութեամբ և յոյսերով է որ Ազգը կը խրախուսի յառաջ երթալ իր փշոտ ու տառապալից ճանապարհէն, ընդփոյթ ողջունելով նոր արշալոյսներ բարօրութեան շրջաններով՝ Միացեալ և Ազատ Հայրենիքի մէջ։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

digitised by A.R.A.R.@